ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

ՑԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՑԵՎ ՊԱՏՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՑԵՎ ՄԻՆՉԵՎ 1936 ԹԻՎԸ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ ԱՅԴ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ (ԿՈՆՎԵՐՍԻԱՅԻ) ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ի. Ա. Ա. Ի.
ԱՐԽԻՎ
ԳՐԱՊԱԼԱՏ

ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1936

Պետհրատի տպարան, Երևան

Գլավլիտ № 2161· պատվեր 818· տիրաժ 1000

Հաստատված է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից·

ՀՐԱՀԱՆԳ

ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի—Երկրորդ հնգամյակի պետական ներքին փոխառության (չորրորդ տարվա բաժին) իրացման կարգի և պայմանների մասին գյուղական աղքաբնակչության մեջ և մինչև 1936 թիվը բաց թողված մասսայական պետական փոխառությունների պարտատոմսերն այդ փոխառությամբ փոխանակելու (կոնվերսիայի) կարգի մասին:

Երկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) իրացումը և նախորդ մասսայական փոխառությունների փոխանակումն այդ փոխառության հետ—կոլտնտեսականների, աշխատավոր մենատնտեսների և արհեստագործական – տնայնագործական արտելների անդամների մեջ—կատարվում է այս հրահանգում սահմանված կարգով:

Բաժին 1·

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1· Երկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա բաժին) փոխառության իրացումն սկսվում է 1936 թ· հուլիսի 2–ից և անց է կացվում լայն բացատրական աշխատանքի և յուրաքանչյուր աշխատավորի փոխառությանը կամավոր կերպով մասնակցելու հիման վրա:

2· Պարտատոմսերն իրացվում են անվանական (պարտատոմսի վրա նշված) արժեքով:

3· Փոխառության իրացման ստուգիչ թվերը գյուղում հասցվում է մինչև գյուղխորհուրդը· արգելվում է վորևե առաջադրություն—փոխառության գծով, հասցնել մինչև կոլտնտեսություն-

ները, կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները և մինչև առանձին կոլտնտեսականները և մենատնտեսները:

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Կոլտնտեսականները և արհեստագործական – տնայնագործական արտելների անդամները փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում կոլեկտիվ բաժնեգրության կարգով, պարտատոմսերի արժեքը վճարվում է բաժնեգրվողների կամքով կամ միանվագ բաժնեգրության ժամանակ (կանխիկ դրամով), կամ մաս-մաս վճարման կարգով:

Կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունն անց է կացվում վոչ թե կոլտնտեսական տնտեսության, այլ յուրաքանչյուր կոլտնտեսականի համար և միայն դրամային արտահայտությամբ: Չի թույլատրվում բաժնեգրության աշխորերով:

5. Կոլտնտեսականները և արհեստագործական – տնայնագործական արտելների անդամները, վորոնք փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում բաժնեգրության միջոցով մաս-մաս վճարման կարգով, վճարում են պարտատոմսերի արժեքը մինչև 1937 թ. փետրվարի 1-ը: Առաջին մուծումը նրանք վճարում են իրենց ցանկությամբ, կամ բաժնեգրության ժամանակ, կամ բաժնեգրությունից հետո 10 որվա ընթացքում:

Առաջին մուծման չափը վորոշվում է կոլտնտեսականների ցանկությամբ: Մնացած մուծումները նրանք վճարում են մաս-մաս վճարման համար տրված ժամանակամիջոցում, այսինքն՝ մինչև 1937 թ. փետրվարի 1-ը:

6. Փոխառության բաժնեգրությունը վճարվում է կոլտնտեսականների կողմից կանխիկ դրամով: Արգելվում է կոլտնտեսության վարչություններին կոլտնտեսականների բաժնեգրության գումարները վճարել կոլտնտեսության միջոցներից, և նույնպես կոլտնտեսականների բաժնեգրության մուծումների պահումները կատարել կոլտնտեսականներին աշխորերի դիմաց հասանելիք կամ տրվելիք գումարներից:

7. Աշխատավոր մենատնտեսները փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում իրենց ցանկությամբ՝ կամ կանխիկ վճարով, կամ անհատական բաժնեգրությամբ մաս-մաս վճարման կարգով: Բաժնեգրությունը մաս-մաս վճարվում է մենատնտեսների կողմից վոչ ուշ քան 1937 թ. փետրվարի 1-ը:

Մենատնտեսները մաս-մաս վճարման բաժնեգրության ժամանակ առաջին մուծումը վճարում են վոչ պակաս բաժնեգրության գումարի մեկ հինգերորդականի չափով: Մնացած մուծումները մենատնտեսների կողմից վճարվում է ամեն ամիս հավասար չափով մաս-մաս վճարման համար սահմանված ժամկետում, այսինքն՝ մինչև 1937 թ. փետրվարի 1-ը:

8. Գյուղական խորհուրդների բանվոր-ծառայողների մեջ փոխառության կոլեկտիվ բաժնեգրությունն անց է կացվում նույն պայմաններով, ինչ վոր քաղաքատիպ վայրերի բանվոր-ծառայողների մեջ, այսինքն՝

ա) փոխառության բաժնեգրությունն անց է կացվում գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովների միջոցով, իսկ բաժնեգրության հաշվարկումները գյուղխորհուրդների հաշվետարների (վորտեղ այդպիսիք չկան—քարտուղարների) միջոցով.

բ) բաժնեգրությունը վճարվում է մաս-մաս վճարման կարգով կիսամսյա հավասար մուծումներով՝ առաջին մուծումը պահվում է 1936 թվի հուլիսի առաջին կեսի աշխատավարձից, իսկ վերջին մուծումը՝ 1937 թվի ապրիլի 2-րդ կեսի աշխատավարձից.

գ) բաժնեգրության մուծումները պահվում են բաժնեգրվողների աշխատավարձից փոխառության բաժնեգրության ժամանակ նրանց տված հանձնարարությունների հիման վրա:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ, ԽՆԱՅԳՈՐԾԻՆ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Փոխառության իրացման կազմակերպումը գյուղում դրվում է Շրջանային Ֆինբաժինների և Շրջանային խնայդրամարկղների վրա, վորոնք տանում են փոխառության աշխատանքները շրջանային գործադիր կոմիտեների ղեկավարությամբ:

10. Շրջանային խնայդրամարկղների վրա դրվում է՝

ա) կազմակերպել գյուղական խորհուրդների միջոցով փոխառության իրացումը կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մեջ, շրջանի յուրաքանչյուր բնակելի վայրում.

բ) անցկացնել գյուղական խորհուրդների և նրանց փոխառության լիազորների միջոցով կոլտնտեսականների և մենատնտեսների բաժնեգրության հաշվարկումները (ստանալ բաժնեգրության մուծումները և տալ պարտատոմսեր բաժնեգրվողներին).

Հանրապետական գրադարան ՀԱՍՍՌ
II-28169թ

գ) հրահանգել գյուղական խորհուրդներին, նրանց լիազորներին և ոժանդակող հանձնաժողովներին՝ փոխառության իրացման կարգի մասին և նույնպես գյուղխորհուրդների գանձապահներին, քարտուղարներին և հաշվետարներին փոխառության հաշվառման, հաշվարկումների և հաշվետվության կարգի մասին.

դ) փոխառության բաժնեգրությունը, հաշվառումն ու հաշվարկումները տանելու համար, մատակարարել գյուղական խորհուրդներին ապիտացիոն նյութերով, բաժնեգրման թերթերով և այլ գործառնական նյութերով.

ե) հսկել և ստուգել գյուղական խորհուրդներում փոխառության աշխատանքների դրությունը և բաժնեգրվողների հետ կատարվող հաշվառման և հաշվարկումների աշխատանքի դրվածքը.

զ) հաշվառման յենթարկել փոխառության բաժնեգրության ամբողջ գումարը, կատարել գյուղական խորհուրդների հետ կատարվող հաշվարկումները, պետական բյուջեյի հետ փոխառությունների վերաբերյալ հաշվարկումները և տեղական բյուջեներին փոխառություններից տրվող մասհանումների հանձնումը:

11. Գյուղական խորհուրդների վրա դրվում է՝

ա) տանել փոխառության և փոխառության բաժնեգրության շուրջը մասսայական-բացատրական աշխատանք կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ ոժանդակող հանձնաժողովների և այլ հասարակական կազմակերպությունների և նույնպես կոլտնտեսությունների վարչությունների միջոցով.

բ) ստանալ լիազորների միջոցով փոխառությանը բաժնեգրված կոլտնտեսականների և մենատնտեսների մուծումները և հավաքված մուծումները հանձնել շրջանային խնայողական դրամարկղին.

գ) պահել գյուղական բյուջեյից աշխատավարձ ստացող բանվոր-ծառայողների փոխառության բաժնեգրության մուծումները նրանց աշխատավարձից և հանձնել պահված մուծումները շրջանային խնայդրամարկղ.

դ) ստանալ շրջխնայդրամարկղից փոխառության պարտատոմսեր և հանձնել բաժնեգրվողներին.

ե) հաշվի առնել բաժնեգրությունը և բաժնեգրության դիմաց մուծված գումարները և ներկայացնել խնայողական դրամարկղ փոխառության վերաբերյալ սահմանված հաշվետվությունը:

12. Փոխառության աշխատանքները գյուղխորհրդում բաշխվում են հետևյալ կերպ՝

ա) գյուղխորհրդի նախագահը ղեկավարում է փոխառության բոլոր աշխատանքները, կազմակերպում է բաժնեգրությունը և բաժնեգրվողներից մուծումների գանձումը, հետևում է գյուղական խորհրդի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր կոլտնտեսականների և մենատնտեսների փոխառության բաժնեգրության լրիվ ընդգրկմանը, հետևում է բաժնեգրվողներին նրանց կողմից վճարված գումարի դիմաց պարտատոմսերի ժամանակին հանձնելուն, և ստուգում է փոխառության հաշվառման և հաշվետվության դրվածքը.

բ) գյուղական խորհրդի գանձապահը, կամ այն անձնավորությունը, որի վրա դրված է գանձապահի պարտականությունները—գյուղխորհրդի կողմից տրված հատուկ լիազորագրով ստանում է շրջխնայդրամարկղից պարտատոմսեր, պահում է պարտատոմսերը և նույնպես բաժնեգրվողներից մուտք յեղած դրամային մուծումները և այդպիսիք հանձնում է շրջանային խնայողական դրամարկղը.

գ) գյուղական խորհրդի հաշվետարը,—իսկ վորտեղ այդպիսի պաշտոն չի սահմանված գյուղական խորհրդի քարտուղարը տանում է փոխառության բաժնեգրության և մուծումների հաշվառում սահմանված ձևերով և փաստաթղթերով ու ներկայացնում է շրջանային խնայդրամարկղին փոխառության վերաբերյալ սահմանված հաշվետվությունը:

Գյուղական վերստուգիչ հանձնաժողովը գյուղական խորհուրդների ստուգման ժամանակ ստուգում է սույն հրահանգում թված փոխառության հաշվառման և հաշվետվության ձևերի ճիշտ վարումը գյուղխորհուրդների կողմից, փոխառության պարտատոմսերի և փաստաթղթերի պահպանումը, և նույնպես փոխառության դիմաց հավաքված միջոցների ժամանակին շրջխնայդրամարկղին հանձնելը:

14. Փոխառության աշխատանքների համար գյուղական խորհուրդներն առանձնացնում են լիազորներ ավելի ակտիվ և վստահելի հասարակական աշխատողներից — կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից ու գյուղական ինտելիգենցիայից, կոլտնտեսությունների վարչությունների, գյուղական և կոլտնտեսային ոժանդակող հանձնաժողովների յերաշխավորությամբ: Լիազորները հաստատվում են շրջանային գործադիր կոմիտեյի նախագահության կողմից, առաջադրված գյուղխորհրդի կողմից շրջ-

նային ֆինբաժնի վարիչի ղեկավարությամբ և կարող են փոխառության աշխատանքից ազատվել միմիայն շրջանային գործադիր կոմիտեի նախագահության վորոշմամբ:

Լիազորները շրջանային գործադիր կոմիտեի վորոշմամբ հաստատվելուց հետո, նրանցից յուրաքանչյուրը տալիս է գյուղխորհրդին պարտավորագիր ձև № 4 բլանկի վրա: Միաժամանակ գյուղխորհուրդը տալիս է լիազորին սահմանված ձևի վկայական, շրջխնայդրամարկղի վարիչի և գյուղական խորհրդի նախագահի ստորագրությամբ:

15. Լիազորները գյուղխորհրդի կողմից կցվում են մուծումները հավաքելու ժամանակաընթացքում կոլտնտեսականների վորոշ խմբի (առավելապես կոլտնտեսական արտադրական բրիգադների), կամ թե մենատնտեսների հատուկ խմբի:

16. Գյուղխորհուրդների փոխառության լիազորների վրա դրվում է.

ա) տանել փոխառության վերաբերյալ բացատրական աշխատանք այն կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ, վորոնց գյուղխորհրդի կողմից կցված է լիազորը.

բ) անցկացնել փոխառության բաժնեգրություն իր կողմից սպասարկվող կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ.

գ) հավաքել կոլտնտեսականների կամ մենատնտեսների բաժնեգրության մուծումները և հավաքված մուծումները հանձնել գյուղխորհրդի դանձապահին:

17. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին կից պետվարկին և խնայգործին ոժանդակող հանձնաժողովները՝

ա) անց են կացնում մասսայական-բացատրական աշխատանք փոխառության վերաբերյալ.

բ) ստուգում են փոխառության հաշվարկումների ճշտությունը բաժնեգրվողների հետ և վճարված պարտատոմսերը ժամանակին բաժնեգրվողներին հանձնելը:

18. Կոլտնտեսությունների վարչությունները ցույց են տալիս ակտիվ ոգնություն գյուղխորհուրդներին և նրանց լիազորներին փոխառության բաժնեգրության և մասսայական-բացատրական աշխատանքներ տանելու մեջ:

19. Շրջանային ֆինբաժինների և շրջխնայդրամարկղների ղեկավարները և գյուղխորհուրդների նախագահները պատասխանատվություն են կրում փոխառության իրացման պլանի կատարման, փոխառության մուծումների ժամանակին և լրիվ ստանալու և պարտատոմսերը ժամանակին բաժնեգրվողներին հանձնելու համար:

Գյուղական խորհուրդները պատասխանատվություն են կրում պարտատոմսերը ժամանակին բաժնեգրվողներին հանձնելու, փոխառության պարտատոմսերի և մուծումների պահպանության համար, իսկ փոխառության մուծումների և պարտատոմսերի կորչելու դեպքում կրում են նյութական պատասխանատվություն:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՄԵՋ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

20. Փոխառության մասին որենքը հրապարակվելուն պես, գյուղական խորհուրդները, կոլտնտեսությունների վարչությունները և ոժանդակ հանձնաժողովները պարտավոր են մինչև բաժնեգրության սկիզբն ապահովել կոլտնտեսականների և մենատնտեսների ժողովների կազմակերպումը:

21. Փոխառության բաժնեգրությունն անց են կացնում գյուղխորհրդի լիազորները՝ գյուղխորհրդից ստացած բաժնեգրման թերթերի վրա: Գյուղխորհուրդների նախագահները պարտավոր են մատակարարել իրենց փոխառության լիազորներին շրջխնայդրամարկղից ստացված բաժնեգրման թերթերով:

22. Կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ բաժնեգրությունն անցկացնելուց լիազորները պարզում են, թե բաժնեգրվողը ինչ դումարի և փոխառության վոր բաժնի (անպայման շահող կամ տոկոսաբեր) պարտատոմսերի յե ցանկանում բաժնեգրվել:

Լիազորը լրացնում է բաժնեգրության թերթը, դրանցելով համապատասխան սյունյակներում բաժնեգրվողի աղգանունը և անունն ու նրա բաժնեգրության դումարը (թվերով և տառերով):

Բաժնեգրվողն ինքնաձեռագիր ստորագրությամբ բաժնեգրման թերթում հաստատում է իր բաժնեգրության դումարը:

Կոլտնտեսականների և մենատնտեսների լրացված բաժնեգրության թերթերը լիազորներն առանց ձգձգելու պարտավոր են հանձնել գյուղխորհրդին:

23. Գյուղխորհրդի քարտուղարը կամ հաշվետարը պարտավոր է ստուգել ճիշտ են արդյոք լրացված բաժնեգրման թերթերը թե վոչ (մասնավորապես բաժնեգրվողների ինքնաձեռագիր

ստորագրությունների առկայությունը)։ Այդ բաժնեգրման թերթերի հիման վրա հաշվետարը, իսկ վորտեղ այդպիսին չկա — գյուղխորհրդի քարտուղարը տանում է բաժնեգրության հաշվառման և բաժնեգրվողների հաշվարկման աշխատանքները։

24. Դպրոցականների (նախնական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների սովորողների) մեջ փոխառության բաժնեգրություն չի տարվում։

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԸ

25. Բաժնեգրվողներից մուծումները հավաքելու համար գյուղխորհրդի քարտուղարը կամ հաշվետարը (կամ նրա հսկողությամբ ինքը լիազորը) յուրաքանչյուր բաժնեգրվողի համար լրացնում է ձև № 52 հաշվարկային անդորրագիրը (և նրա արմատը)։

Լիազորը բաժնեգրվողներից առաջին մուծումն ստանալու հետ միաժամանակ պարտավոր է հանձնել յուրաքանչյուր բաժնեգրվողին հաշվարկային անդորրագիր՝ վերցնելով նրա ստորագրությունն անդորրագրի արմատում։

Մինչև բաժնեգրության հաշվարկումների լրիվ ավարտվելն անդորրագրերը մնում են բաժնեգրվողների մոտ, իսկ անդորրագրային գրքույկը, նրա մեջ մնացած անդորրագրային արմատներով պահվում է լիազորի մոտ։

26. Փոխառության բաժնեգրության ժամանակ յուրաքանչյուր բաժնեգրվող հայտնում է, թե ինչ ժամկետների նա կվճարի իր բաժնեգրության մուծումները լիազորին։ Հայտարարված ժամկետները բաժնեգրվողի համար պարտադիր են։

Շրջինայդրամարկղները, գյուղխորհուրդները, ոժանդակող հանձնաժողովները և փոխառության լիազորները պարտավոր են հետևել, վոր մաս-մաս վճարման կարգով փոխառության բաժնեգրված կոլտնտեսականները և մենատնտեսները փոխառության մուծումները ժամանակին վճարեն։

Լիազորը պարտավոր է բաժնեգրվողի կողմից հայտարարված ժամկետներին ստանալ նրանից հասանելիք մուծումները և դրանցել անդորրագրում, վորը ներկայացվում է բաժնեգրվողի կողմից յուրաքանչյուր մուծում կատարելու ժամանակ և նույն անդորրագրի արմատում, վորը պահվում է լիազորի մոտ։

Լիազորն ստորագրում է բաժնեգրվողի կողմից ներկայացված

անդորրագրում, հաստատելով իր ստորագրությամբ նրանից ստացած մուծման գումարը։

Միաժամանակ բաժնեգրվողն ստորագրում է անդորրագրի արմատում, հաստատելով իր ստորագրությամբ մուծած գումարը և մուծման որը։

Լիազորն իրավունք չունի բաժնեգրվողից մուծումներ ընդունել առանց հաշվարկային անդորրագրի և անդորրագրի արմատի վրա դրանցումներ կատարելու։

27. Այն լիազորները, վորոնք աշխատանքները տանում են այն վայրում, ուր գտնվում է գյուղխորհուրդը, պարտավոր են հանձնելու գյուղխորհրդի գանձապահին բաժնեգրվողներից հավաքած մուծումները—ամեն որ, յեթե լիազորները մուծումները հավաքում են վոչ գյուղխորհրդի հետ միևնույն վայրում գտնվող կոլտնտեսություններում կամ գյուղերում վոչ պակաս, քան յերեք որը մեկ անգամ։

Լիազորները պարտավոր են հավաքած մուծումները գյուղխորհրդին հանձնելուց ներկայացնել գյուղխորհրդի գանձապահին հաշվարկային անդորրագրերի արմատները։

Գյուղխորհրդի գանձապահը պարտավոր է ստուգել լիազորի կողմից հանձնվող մուծումների գումարի ճշտությունն անդորրագրերի արմատներով։

Գյուղխորհրդի քարտուղարը կամ հաշվետարն այդ անդորրագրերի նույն արմատների հիման վրա դրանցում է ձև № 53 հաշվարկային տեղեկագրում յուրաքանչյուր բաժնեգրվողից մուտք յեղած մուծումները։

28. Յուրաքանչյուր ամսվա 1-ին, գյուղխորհրդի բոլոր լիազորներն իրենց մոտ գտնվող անդորրագրային գրքույկները, անդորրագրերի արմատների հետ միասին, ներկայացնում են գյուղխորհրդի գանձապահին ստուգման և կոնտրոլի համար։ Գյուղխորհրդի գանձապահը պարտավոր է անդորրագրերի արմատներում հաստատելու բաժնեգրվողների ստորագրությունների առկայությունը և ստուգելու լիազորների կողմից գյուղխորհրդին հանձնված բաժնեգրվողների հավաքած մուծումների լրիվ և ժամանակին հանձնելը։

29. Յեթե կոլտնտեսականները կամ մենատնտեսները վճարում են իրենց փոխառության բաժնեգրությունն անմիջականորեն գյուղխորհրդին, այդ դեպքում գրամը նրանցից ընդունում է գյուղխորհրդի գանձապահը։

Գյուղխորհրդի գանձապահը ձևակերպում է բաժնեգրվողնե-

բից դրամի ընդունումը նույն կարգով, ինչ վոր սահմանված է լիազորների համար (հոդ. 26). այդ բաժնեգրվողների հաշվարկային անդորրագրերի արմատները պետք է պահվեն գյուղխորհրդի գանձապահի մոտ:

ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ

30. Գյուղխորհուրդը պարտավոր է պարտատոմսերը կոլտնտեսականներին և մենատնտեսներին տալ յուրաքանչյուրին իր ամբողջ բաժնեգրության դիմաց մուծած գումարի չափով:

Պարտատոմսերը բաժնեգրվողներին տալիս է անպայման գյուղխորհրդի գանձապահը լիազորի ներկայությամբ բաժնեգրվողի կողմից հաշվարկային անդորրագիրը ներկայացնելուց և անպայմանորեն անդորրագիրը լիազորի մոտ գտնվող անդորրագրի արմատի հետ համեմատելուց հետո: Անդորրագրի արմատում վերցվում է բաժնեգրվողի ստորագրությունը պարտատոմսերն ստանալու մասին:

Պարտատոմսերը բաժնեգրվողին տալուց գանձապահը թողնում է իր մոտ բաժնեգրվողի անդորրագիրը, վորը պահվում է գյուղխորհրդում նրա արմատի հետ միասին:

Ծանոթություն.—Շրջխնայդրամարկղը գյուղխորհրդի գանձապահին տալիս է պարտատոմսեր գյուղխորհրդի լիազորագրով (ձև № 140 բլանկի վրա): Լիազորագրով տրված պարտատոմսերի գումարի մասին խնայդրամարկղը գրավոր հայտնում է գյուղխորհրդին:

31. Կոլտնտեսականների և մենատնտեսների բաժնեգրության մաս-մաս վճարման ժամկետը լրանալուց հետո, այսինքն՝ վոչ ուշ, քան 1937 թ. փետրվարի 1-ը գյուղխորհուրդը պարտավոր է ստուգել, թե կոլտնտեսականներից և մենատնտեսներից ով դեռ չի ստացել պարտատոմսեր և 10 որվա ընթացքում հանձնել պարտատոմսերը, պարտատոմսերի արժեքը լրիվ վճարած բաժնեգրվողներին:

Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդից անկախ պատճառներով (բաժնեգրվողի այդ վայրից մեկնելը, յերկարատև հիվանդությունը և այլն) առանձին բաժնեգրվողների անհնար է հանձնել պարտատոմսերը, գյուղխորհուրդը պարտավոր է այդ պարտատոմսերը հանձնելու (այդպիսիք առանց բաժնեգրվողներին ամրացնելու) շրջխնայդրամարկղ վոչ ուշ, քան բաժնեգրության հաշվարկումներն ավարտելու որվանից մեկ ամիս հետո: Պարտատոմսերը հանձնվում են բաժնեգրվողների ցուցակի հետ միասին, ցույց տալով յուրաքանչյուր բաժնեգրվողի կողմից վճարված գումարը: Ցուցակին կցվում են այդ բաժնեգրվողների հաշվարկային անդորրագրերի արմատները: Ցուցակի պատճեն գյուղխորհուրդը պահում է իր մոտ:

32. Այն բաժնեգրվողները, վորոնք չեն ստացել իրենց պարտատոմսերը գյուղխորհրդում, կարող են ստանալ վճարած գումարի չափով պարտատոմսեր շրջխնայդրամարկղում մինչև 1940 թվի հունիսի 1-ը:

Խնայդրամարկղից պարտատոմսերն ստանալու համար բաժնեգրվողները պարտավոր են ներկայացնել իրենց մոտ գտնվող բաժնեգրության վճարումը հաստատող հաշվարկային անդորրագրերը. այն բաժնեգրվողները, վորոնք յերեք տարվա ընթացքում մինչև 1940 թվի հունիսի 1-ը չեն ստանա իրենց պարտատոմսերը, կզրկվեն այդ պարտատոմսերն ստանալու իրավունքից և այդպիսիք կհանձնվեն վորպես յեկամուտ պետական բյուջեն:

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

33. Գյուղխորհուրդը պարտավոր է հաշվի առնել.

ա) յուրաքանչյուր կոլտնտեսականի և մենատնտեսի բաժնեգրության գումարը (ձև № 53) հաշվարկային տեղեկագրերում, վորոնք տարվում են առանձին լիազորի կողմից սպասարկվող բաժնեգրվողների յուրաքանչյուր խմբի համար առանձին.

բ) յուրաքանչյուր կոլտնտեսականի և մենատնտեսի բաժնեգրությունից մուծված գումարները—հաշվարկային տեղեկագրերում (ձև № 53), վորոնք լրացվում են հաշվարկային անդորրագրերի (ձև № 52) հիման վրա.

գ) կոլտնտեսականների, մենատնտեսների և գյուղխորհրդի բանվոր-ծառայողների բաժնեգրությունից մուծված ընդհանուր գումարը—դրամարկղային գրքում (ձև № 26) և «Գեյեկամուտների հանձնման հաշվարկային տեղեկագրում» (ձև № 29):

դ) յուրաքանչյուր լիազորի կողմից հանձնված մուծումների գումարը—լիազորի անձնական հաշվում «Հաշվետու անձինք, զանազան գումարներ և հաշվարկումներ» գրքում (ձև № 28) և անդորրագրի արմատում (ձև № 22ա), վորը տրվում է լիազորին գրամը նրանից ընդունելիս.

ե) խնայդրամարկղից, գյուղխորհրդի կողմից ստացված պար-

տատոմսերը—պարտատոմսերի հաշվառման տեղեկագրում, վորը կցված է դրամարկղային դրքին (ձև № 26).

ղ) խնայդրամարկղից ստացված հաշվարկային անդորրագրերի գրfուլկները (ձև № 52) փոխառությունների վերաբերյալ անդորրագրային դրքույկների հաշվառման տեղեկագրում, վորը կցված է դրամարկղային դրքին (ձև № 26):

Ծանոթություն.—Լրացված բաժնեգրության թերթերը, հաշվարկային անդորրագրերը և արմատները, հաշվարկային տեղեկագրերը և հարակից տեղեկագրերի պատճենները (ձև № 54) պահվում են գյուղական խորհրդում դրամական փաստաթղթերի հետ հավասար մինչև 1940 թվի հուլիսի 1-ը:

34. Գյուղական խորհրդի դանձապահը պարտավոր է հաջորդաբար յուրաքանչյուր ամսի 3, 8, 13, 18, 23 և 28-ին հանձնել շրջխնայդրամարկղ անձամբ, կամ առանձին մարդու միջոցով և կամ փոստով՝ կոլտնտեսականներից և մենատնտեսներից փոխառության դիմաց գյուղխորհուրդ մուծված ամբողջ դրամը, ինչպես և գյուղական խորհրդի բանվորների և ծառայողների աշխատավարձից՝ նրանց բաժնեգրության դիմաց պահված մուծումները: Դրամը հանձնվում է հարակից տեղեկագրով (ձև № 54):

35. Գյուղական խորհուրդը պարտավոր է ներկայացնել շրջանային խնայողական դրամարկղ հաշվետու տեղեկություններ փոխառության բաժնեգրության ընթացքի մասին ձև № 21-ով նախագահի և քարտուղարի (կամ հաշվետարի) ստորագրություններով: Այդ տեղեկությունները ներկայացվում են շրջանային խնայողական դրամարկղը հետևյալ ժամկետներին—հուլիսի 3, 8, 13, 18, 23 և 28-ին, ոգոստոսի 13-ին և 28-ին, իսկ սկսած սեպտեմբեր ամսից յուրաքանչյուր ամսի 28-ին մինչև փոխառության հաշվարկումները վերջանալը:

36. Բաժնեգրության հաշվարկումները վերջանալուց հետո, գյուղական խորհուրդները պարտավոր են ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կողմից սահմանված ժամկետներին ներկայացնել շրջանային խնայողական դրամարկղ նախագահի և քարտուղարի (կամ հաշվետարի) ստորագրություններով № 17 ձևով հանրագումարային հաշվետվություն—փոխառության բաժնեգրության արդյունքների, փոխառության դիմաց մուծված գումարների և բաժնեգրվողներին հանձնված պարտատոմսերի մասին:

37. Մատնված կերպով աղավաղված հաշվետու տեղեկություններ ներկայացնելու, ինչպես և տեղեկությունները ներկայացնելու ժամկետները հաջորդաբար կամ չարամիտ կերպով խախտելու համար, մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության, ԽՍՀՄ ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի 1933 թ. նոյեմբերի 27-ի՝ «Հաշվառման սխալ տեղեկություններ և հաշվետու տվյալներ, ինչպես և հաշվառումների, հաշվետվությունների նյութերը ներկայացնելու ձևերն ու ժամկետները խախտելու պատասխանատվության մասին» վորոշման հիման վրա: (ԽՍՀՄ Որենք. Ժողովածու, 1933 թ., № 70, հոդված 417):

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

38. Գյուղական խորհրդի աշխատակիցները փոխառության աշխատանքների համար վարձատրություն են ստանում կոլտնտեսականների և անայնագործական-արհեստագործական արտելների անդամների բաժնեգրության դիմաց մուծված գումարից ½ տոկոսի չափով և մենատնտեսների մեջ փոխառության իրացման դիմաց մուծված գումարից 1 տոկոսի չափով: Այդ վարձատրությունը բաժանում է գյուղական խորհրդի աշխատակիցների մեջ նախագահը՝ հաշվի առնելով, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես է կատարել փոխառության աշխատանքները:

Գյուղխորհրդի լիազորները փոխառության աշխատանքները կատարելու համար վարձատրություն են ստանում—փաստորեն յուրաքանչյուր լիազորի կողմից փոխառության դիմաց հավաքված գումարի 1 տոկոսի չափով:

Գյուղական խորհուրդների աշխատակիցների և լիազորների փոխառության վարձատրությունը կատարում է շրջանային խնայողական դրամարկղը յերկու ժամկետներում՝ 1936 թվի հոկտեմբերի 1-ին և փոխառության հաշվարկումները վերջանալուց հետո: Լիազորների փոխառության վարձատրությունը կատարում է շրջանային խնայողական դրամարկղը՝ գյուղխորհրդի կողմից ներկայացված ցուցակով:

Ցուցակում ցույց է տրվում լիազորների աղգանունները և յուրաքանչյուր լիազորի կողմից հավաքված գումարը:

Շրջանային խնայողական դրամարկղը լիազորների փոխառության վարձատրությունը կատարում է կամ անմիջականորեն կամ գյուղխորհրդի միջոցով: Վերջին դեպքում գյուղխորհուրդն ի հաստատումն այն բանի, վոր իրոք լիազորների վարձատրու-

թյունը կատարված է, ներկայացնում է շրջանային խնայողական դրամարկղ լիազորների ստորագրությունները:

Բաժին 2.

ՓԱԽԱՆԱԿՈՒՄՆ (ԿՈՆՎԵՐՍԻԱ) ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փոխանակման ընդհանուր պայմանները

39. Ցերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով փոխանակվում են հետևյալ մասնայական փոխառությունների պարտատոմսերը.

ա) Ինդուստրացման 3-րդ փոխառության.

բ) «Հնգամյակը 4 տարում» փոխառության.

գ) Հնգամյակի 3-րդ վճռական տարվա փոխառության.

դ) Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա փոխառության.

ե) Ցերկրորդ հնգամյակի (առաջին, յերկրորդ և յերրորդ տարիների) փոխառությունների պարտատոմսերը:

Փոխանակմանը յենթակա յեն վերոհիշյալ փոխառությունների բոլոր մասերի (տոկոսաբեր, տոկոսաբեր-չհող, անտոկոսաբեր-չհող և անպայման չհող) պարտատոմսերը:

40. Մասնայական փոխառությունների չհումների վիճակահանությունները, վորոնց պարտատոմսերը յենթակա յեն փոխանակման, կատարվում են սովորական կարգով մինչև 1936 թ. դեկտեմբերի 1-ը: Այդ փոխառությունների 1936 թվի դեկտեմբերին նշանակված, ինչպես և հետագա բոլոր վիճակահանությունները տեղի չեն ունենա այնքան, վորքան 1936 թվի դեկտեմբերի 1-ից պարտատոմսատերերը յեկամուտ են ստանում նոր փոխառության պարտատոմսերով, վորոնցով փոխանակվում են նախորդ փոխառությունների պարտատոմսերը:

Նույնպես տեղի չեն ունենա Հնգամյակի 3-րդ վճռական տարվա փոխառության և հնգամյակի 4-րդ ավարտական տարվա փոխառության տոկոսաբեր մասերի, ինչպես և ինդուստրացման 3-րդ փոխառության, «Հնգամյակը չորս տարում» փոխառության մարման վիճակահանությունները, վորոնք նշանակված եյին 1936 թվի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին և այդ փոխառությունների բոլոր հաջորդող մարման վիճակահանությունները:

41. Փոխանակվող փոխառությունների—մինչև 1936 թվի դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած բոլոր վիճակահանություններով չահած և մարված պարտատոմսերը (բացի հնգամյակի չորրորդ ավարտական տարվա անպայման չհող մասի չահած պարտատոմսերից) յենթակա չեն փոխանակման և կարող են ներկայացվել խնայողական դրամարկղները կանխիկ դրամով վճարելու համար մինչև 1940 թվի դեկտեմբերի 1-ը:

1940 թվի դեկտեմբերի 1-ից այդ պարտատոմսերի տերերը զրկվում են այդ պարտատոմսերի անվանական արժեքն, ինչպես և նրանցով չպահանջված չահումներն ստանալու իրավունքից:

42. Հնգամյակի չորրորդ ավարտական տարվա փոխառության անպայման չհող մասի պարտատոմսերը, վորոնցով չահումներ են վճարված այդ փոխառությամբ կատարված վիճակահանություններով (1—16 վիճակահանություններ) յենթակա չեն փոխանակման յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով—ընդհանուր հիմունքներով:

Ծանոթություն.—Յեթե փոխանակման համար ներկայացվում են հնգամյակի 4-րդ ավարտական տարվա փոխառության պարտատոմսեր, վորոնցով չեն ստացվել 1936 թ. դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած վիճակահանություններից մեկնումեկում ընկած չահումները, ապա այդ չահումը վճարվում է պարտատոմսատիրոջը, իսկ պարտատոմսը փոխանակվում է յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով:

43. Ցերկրորդ հնգամյակի (առաջին, յերկրորդ, յերրորդ տարիների) փոխառությունների տոկոսաբեր պարտատոմսերով վճարվում են 1936 թվի հոկտեմբերի 1-ի ժամկետի, ինչպես և բոլոր նախորդ ժամկետների կուպոնները (կտրոնները): Փոխանակման յենթակա մյուս փոխառությունների տոկոսաբեր պարտատոմսերով վճարվում են 1936 թվի դեկտեմբերի 1-ի, ինչպես և բոլոր նախորդ ժամկետների կուպոնները:

Վճարման յենթակա հիշյալ կուպոնները կարող են ներկայացվել վճարելու համար մինչև 1940 թվի դեկտեմբերի 1-ը: Այդ ժամկետից հետո կուպոնների տերերը զրկվում են կուպոնների արժեքներն ստանալու իրավունքից:

44. «Հնգամյակը չորս տարում» փոխառության պարտատոմսերին կից № 1 և № 2 լրացուցիչ կտրոնները փոխանակման ժամանակ չեն վճարվում:

45. Փոխանակվող փոխառությունների պարտատոմսատերերը կարող են իրենց ցանկությամբ ստանալ անպայման չհող կամ

տոկոսաբեր պարտատոմսերի փոխարեն յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) ցանկացած արժեքի պարտատոմսեր (500 ռուբլիանոց, 300, 200, 100 և 50 ռուբլիանոց) անկախ նրանից, թե իրենք ինչ մասի (տոկոսաբեր, տոկոսաբերչահող, անտոկոսաբեր-չահող կամ անպայման չահող) և ինչ արժեքի պարտատոմսեր են փոխանակում նոր փոխառությամբ:

Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) 25 և 10 ռուբլիանոց պարտատոմսերը տրվում են նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակման ժամանակ միայն այն դեպքում, յերբ փոխանակման համար ներկայացված պարտատոմսերի արժեքի չափով հնարավոր չէ տալ ավելի բարձր արժեք ունեցող պարտատոմս:

Որինակ· 175 ռուբլի ընդհանուր գումարով պարտատոմսեր փոխանակող պարտատոմսատերն ստանում է իր ընտրությամբ նոր փոխառության 1 հատ 100 ռուբլիանոց և 1 հատ 50 ռուբլիանոց պարտատոմսեր, կամ յերեք հատ 50 ռուբլիանոց պարտատոմսեր և բացի դրանից այդ փոխառության մեկ հատ 25 ռուբլիանոց պարտատոմս:

46· Յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերը տրվում են պարտատոմսատերերին անվանական արժեքով այն գումարի չափով, ինչ գումարի չափով ներկայացված են փոխանակման համար նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսեր:

47· Նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը նոր փոխառության պարտատոմսերով կատարվում է խնայողական դրամարկղների կողմից 1936 թվի դեկտեմբերի 1-ից մինչև 1937 թվի մայիսի 1-ն անմիջականորեն կոլտնտեսություններում և գյուղխորհուրդներում:

Պարտատոմսատերերը, վորոնք մինչ այդ ժամկետը չեն ներկայացնի իրենց պարտատոմսերը փոխանակման համար, իրավունք ունեն ներկայացնել այդպիսիք փոխանակման համար խնայդրամարկղները մինչև 1940 թվի դեկտեմբերի 1-ը:

1940 թվի դեկտեմբերի 1-ից նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսերը վոչնչացվում են և չեն փոխանակվում:

ՊԱՐՏԱՏՈՄՍԱՏԵՐԵՐԻ ՅՈՒՅԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ — ՆԱԽՈՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

48· Փոխանակումը կազմակերպված ձևով անցկացնելու և պարտատոմսատերերի նոր փոխառության համապատասխան արժեքներով պարտատոմսերի պահանջը լրիվ չափով բավարարելու համար, շրջանային խնայդրամարկղները պարտավոր են կազմակերպել գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների վարչությունների միջոցով պարտատոմսատերերի ցուցակների կազմումը —նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսերը փոխանակելու համար (ձև № 155):

49· Ցուցակների կազմումը կատարվում է հետևյալ կերպ·

ա) Նոր փոխառության բաժնեգրության հետ միասին, գյուղխորհուրդները և կոլտնտեսությունների վարչությունները ոժանդակող հանձնաժողովների ողնությամբ պարտավոր են բացատրել կոլտնտեսականներին և մենատնտեսներին նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսերի փոխանակման կարգի և պայմանների մասին և ժամկետ նշանակել (7—10 որից վոչ ավելի) պարտատոմսատերերի ցուցակները կազմելու համար՝ պարտատոմսերը փոխանակելու նպատակով·

Գյուղական խորհուրդները և կոլտնտեսությունների վարչությունները պարտավոր են նախազգուշացնել պարտատոմսատերերին այն մասին, վոր նրանք մինչև այդ ժամկետը պիտի հաշվեն իրենց փոխանակման յենթակա փոխառությունների պարտատոմսերի քանակն ու գումարը:

բ) Կոլտնտեսականների ցուցակները կազմում են կոլտնտեսությունների հաշվետարները կոլտնտվարչության կողմից առանձնացված անդամի հսկողության տակ, ոժանդակող հանձնաժողովի ողնությամբ: Կոլտնտվարչությունն ոժանդակող հանձնաժողովի հետ միասին պիտի աշխատեն նշված ժամկետին մրցնել ցուցակի մեջ այն բոլոր կոլտնտեսականներին, վորոնք ունեն փոխանակման յենթակա փոխառությունների պարտատոմսեր:

գ) Մենատնտեսների ցուցակները կազմում են գյուղխորհուրդների քարտուղարները կամ հաշվետարները: Գյուղխորհրդին կից ոժանդակող հանձնաժողովն ոժանդակում է ցուցակները կազմելու համար՝ հայտնելով այդ մասին բոլոր մենատնտեսներին և մտցնելով նրանց ցուցակների մեջ·

դ) կոլտնտեսականների և մենատնտեսների պարտատոմսերի փոխանակման ցուցակները կազմվում են յուրաքանչյուր պարտատոմսատերոջ հարցման հիման վրա:

Ցուցակի մեջ մտցնելու համար, յուրաքանչյուր կոլտնտեսական և մենատնտես ինքն է ցույց տալիս, թե նոր փոխառության ինչ գումարի և ինչպիսի պարտատոմսեր է նա ցանկանում (50 ռուբլիանոց, 100, 200, 300 թե 500 ռուբլիանոց) փոխանակել նախորդ մասսայական փոխառությունների իր պարտատոմսերի հետ:

Ցուցակի մեջ մտցրած տեղեկությունները պարտատոմսատերը հաստատում է իր ինքնաձեռագիր ստորագրությամբ ցուցակի մեջ:

50. Պարտատոմսերի փոխանակման ցուցակները կազմելիս, գյուղխորհուրդների քարտուղարները կամ հաշվետարները, կոլտնտեսության հաշվետարները և ժամանակող հանձնաժողովները պարտավոր են բացատրել կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վոր նրանք կարող են ընտրել նոր փոխառության ցանկացած մասի (անպայման շահող կամ տոկոսաբեր) և ցանկացած արժեքի պարտատոմս:

Ինստ պահպանելով ցանկացած արժեքով պարտատոմսեր ընտրելու պարտատոմսատերերի լրիվ կամավորության սկզբունքը, գյուղխորհուրդները, կոլտնտվարչությունները և ժամանակող հանձնաժողովները պիտի բացատրեն բոլոր պարտատոմսատերերին խոշոր արժեքներ ունեցող պարտատոմսերի հարմարությունն ու առավելությունն, ինչպես իրեն պարտատոմսատիրոջ, այնպես էլ պետության համար, ի նկատի ունենալով, վոր այդ հանգամանքը հետագայում կհեշտացնի պարտատոմսատերերին ստուգել իրենց պարտատոմսերը նրանցով յեկամուտներ ստանալու համար և կոժանդակի բարելավելու պետական փոխառությունների կազմակերպման ամբողջ գործը:

51. Ցուրաքանչյուր կոլտնտեսության վարչություն պարտավոր է պարտատոմսերի փոխանակման վերաբերյալ կոլտնտեսականների ցուցակը կազմելը վերջացնել տվյալ կոլտնտեսությունում նոր փոխառության բաժնեգրությունը վերջացնելուց 5—7 որից վոչ ուշ: Այդ ժամկետին, յուրաքանչյուր գյուղխորհուրդ պարտավոր է վերջացնել մենատնտեսների պարտատոմսերի փոխանակման ցուցակը:

52. Պարտատոմսերի փոխանակման կոլտնտեսականների համար լրացրած ցուցակը, կոլտնտեսության հաշվետարը պարտավոր է անմիջապես հանձնել գյուղխորհրդի քարտուղարին, վորն ստուգում է ցուցակների ճիշտ կազմած լինելը (բոլոր պարտատոմսատերերին ցուցակի մեջ մտցնելը, ինքնաձեռագիր ստորագրությունները և այլն):

Կոլտնտեսականների և մենատնտեսների բոլոր ցուցակներն ստուգելուց հետո գյուղխորհրդի քարտուղարը հաշվում է այդ ցուցակների գումարները և 1936 թվի հուլիսի 20-ից վոչ ուշ տեղեկանք է ներկայացնում խնայդրամարկղ ձև № 156-ով՝ նոր փոխառության պարտատոմսերի պահանջի մասին, այդպիսիք կոլտնտեսականներին և մենատնտեսներին տալու համար, նախկին մասսայական փոխառությունների պարտատոմսերի փոխարեն:

53. Գյուղխորհուրդները և կոլտնտվարչությունները պատասխանատու են կոլտնտեսականների և մենատնտեսների պարտատոմսերի փոխանակման ցուցակները ժամանակին, ճիշտ և լրիվ կազմելու համար:

Ցուրաքանչյուր գյուղխորհրդի և կոլտնտեսության նոր փոխառության իրացման վերաբերյալ աշխատանքները գնահատելիս, պիտի յելնել վոչ միայն նոր փոխառության իրացման արդյունքներից, այլև նախորդ մասսայական փոխառությունների փոխանակման (կոնվերսիա) վերաբերյալ կոլտնտեսականների և մենատնտեսների ցուցակները ժամանակին և լրիվությամբ կազմելուց:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

54. Նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը նոր փոխառության պարտատոմսերով, կատարվում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի կողմից յուրաքանչյուր առանձին հանրապետության, յերկրի և մարզի համար սահմանված որացուցային պլանով:

Գյուղխորհուրդները և կոլտնտվարչությունները պարտավոր են պարտատոմսերի փոխանակության կապակցությամբ, կազմակերպել կրկնակի լայն պարզաբանումներ աղգաբնակչությանը, փոխանակման կարգի և պայմանների մասին:

55. Կոլտնտեսականների պարտատոմսերի փոխանակումը կատարում են շրջանային խնայողական դրամարկղի լիազորները կոլտնտվարչության շենքում, այդ նպատակի համար կոլտնտվարչության անդամներից առանձնացված ներկայացուցչի և կոլտնտեսության ժամանակող հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ:

Կոլտնտեսականների պարտատոմսերի փոխանակումը վերջանալուց հետո, շրջխնայդրամարկղի լիազորը կատարում է մենատնտեսների պարտատոմսերի փոխանակումը գյուղխորհրդի շենքում, գյուղխորհրդի ժամանակող հանձնաժողովի մասնակցությամբ:

Յուրաքանչյուր կոլտնտեսական և մենատնտես կարող է իր ցանկությամբ փոխանակել իր պարտատոմսերն անմիջականորեն շրջանային խնայողական դրամարկղում ինքն անձամբ ներկայանալով խնայդրամարկղ:

56. Կոլտնտեսականների և մենատնտեսների պարտատոմսերի փոխանակումը պիտի պատրաստված լինի խնամքով և կատարվի հետևյալ կերպ.

ա) գյուղխորհուրդը շրջխնայդրամարկղի հանձնարարությամբ նշանակում է յուրաքանչյուր կոլտնտեսության և առանձին մենատնտեսների պարտատոմսերը փոխանակելու համար տեղը, որը և ժամը, ապահովելով մեծագույն հարմարություններ պարտատոմսատերերի համար:

Նշանակված ժամկետին շրջխնայդրամարկղի լիազորը, վորի վրա դրված է պարտատոմսերի փոխանակումը, մեկնում է գյուղխորհուրդ:

բ) Գյուղխորհուրդները և կոլտնտվարչությունները լայն չափով հաղորդում են ազդարարությունը պարտատոմսերի փոխանակման տեղի և ժամանակի մասին և առանձնացնում են իրենց ներկայացուցիչներին շրջխնայդրամարկղի լիազորի հետ փոխանակման աշխատանքներին մասնակցելու համար.

գ) շրջխնայդրամարկղի լիազորը կոլտնտեսության ժամանակող հանձնաժողովի նախագահի հետ միասին, պարտավոր է կազմակերպել պարտատոմսերի փոխանակման ժամանակ փոխանակվող պարտատոմսերի ստուգում մինչև 1936 թվի դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած շահման և մարման վիճակահանությունների աղյուսակներով: Շրջխնայդրամարկղի լիազորը պարտավոր է գյուղխորհրդի և կոլտնտվարչության միջոցով լայն չափով տեղեկացնել բոլոր կոլտնտեսականներին և մենատնտեսներին մինչև փոխանակումը կատարելը պարտատոմսերն ստուգելու անհրաժեշտության մասին, նախազգուշացնելով, վոր փոխանակումից հետո, փոխանակված պարտատոմսերի շահումների և անվանական արժեքի վճարման մասին վոչ մի դիմում չի ընդունվի: Պարտատոմսերն ստուգելու համար շրջխնայդրամարկղի լիազորը ներգրավում է ժամանակող հանձնաժողովների կողմից առանձնացված ակտիվիստներին, ինչպես և գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների հաշվետարներին, շրջխնայդրամարկղի լիազորը պարտավոր է հրահանգել պարտատոմսերի փոխանակման աշխատանքների մեջ ներգրավված աշխատակիցներին և տալ նրանց վիճակահանությունների աղյուսակներ:

Շրջխնայդրամարկղի լիազորը պատասխանատու է այն բանի համար, վորպեսզի կոլտնտեսականների և մենատնտեսների կողմից փոխանակման համար ներկայացված յուրաքանչյուր պարտատոմս ստուգվի:

Ծանոթություն.—Գյուղխորհուրդների բանվոր-ծառայողների պարտատոմսերի փոխանակումը կատարվում է շրջխնայդրամարկղի լիազորի կողմից կոլտնտեսականների և մենատնտեսների պարտատոմսերը փոխանակելու հետ միասին:

ՊԱՐՏԱՏՈՄՍԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆ Ի ՊԱՀՏՎԱԾ ԿԱՄ ԴՐԱՎ ԴՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

57. Խնայդրամարկղները, վորոնք ընդունել են պարտատոմսատերերից նախորդ փոխառությունների պարտատոմսերն ի պահ կամ դրավ՝ փոխատվության դիմաց, պիտի լայն կերպով տեղեկացնեն այդ պարտատոմսատերերին թերթերում հայտարարություններ տալու և բացի դրանից փոստի միջոցով նրանց ծանուցագրեր ուղարկելու կարգով, այդ պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերով փոխանակելու անհրաժեշտության մասին:

58. Այն պարտատոմսատերերը, վորոնք հանձնել են նախորդ մասսայական փոխառությունների իրենց պարտատոմսերը խնայդրամարկղ վորպես ի պահ, այդ պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերով փոխանակում են իրենց անձամբ խնայդրամարկղ ներկայանալու դեպքում:

Եթե պարտատոմսատերն անձամբ խնայդրամարկղ ներկայանալու հնարավորություն չունի, ուղարկում է խնայդրամարկղ գրավոր դիմում, նշելով, թե նոր փոխառության ինչպիսի պարտատոմսերով պիտի փոխանակվեն իրեն պարտատոմսերը: Բացի դրանից դիմումի մեջ պարտատոմսատերը պիտի գրի, թե նա ցանկանո՞ւմ է արդյոք ուղարկել իրեն նոր փոխառության պարտատոմսերը, թե թողնել այդպիսիք, վորպես ի պահ խնայողական դրամարկղում: Դիմումի հետ միասին պարտատոմսատերը պարտավոր է ուղարկել (բաց արժեքավոր ծրարով) խնայդրա-

4 ИЮЛ 1936

մարկղի կողմից նրան տված պահպանման վկայականն, առանց վորի խնայողական դրամարկղը պարտատոմսերի փոխանակում չի կատարի։

59. Պարտատոմսատերերը, վորոնք նախկին մասնայական փոխառությունների պարտատոմսերով ստացել են խնայդրամարկղից փոխատվություններ պիտի մինչև 1937 թվի ապրիլի 1-ը վերջացնեն իրենց փոխատվության հաշվարկումներն, անձամբ ներկայանալով խնայդրամարկղ, կամ փոստով ուղարկելով խնայդրամարկղին հասանելիք փոխատվության գումարը տոկոսներով և պահպանման համար վճարով։

Փոխատվությունների հաշվարկումների լիկվիդացիան և գրավ դրված պարտատոմսերի փոխանակումը կատարվում է հետևյալ կերպ.

ա) փոխատվությունը, վորի ժամկետն անցել է, մարվում է պարտատոմսատիրոջ կողմից համաձայն իր ցանկության կանխիկ դրամով, կամ գրավ դրված պարտատոմսերով համապատասխան գումարի չափով։ Վերջին դեպքում, փոխատվությունը մարելուց հետո, մնացած գումարի համար պարտատոմսատիրոջը տրվում է նոր փոխառության պարտատոմսեր.

բ) փոխատվությունը, վորի ժամկետը չի անցել, պարտատոմսատիրոջ ցանկությամբ կամ մարվում է այդպիսին կանխիկ դրամով կամ պահվում է մինչև ժամկետը լրանալը։ Այդ դեպքում, գրավ դրված պարտատոմսերն ամբողջությամբ փոխանակվում են նոր փոխառության պարտատոմսերով։

60. Եթե պարտատոմսատերը փոխատվության վերաբերյալ հաշվարկումները կատարելու և գրավ դրված պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերով փոխանակելու համար մինչև 1937 թ. ապրիլի 1-ը խնայդրամարկղ չներկայանա, խնայդրամարկղն ինքն է մարում գրավ դրված պարտատոմսերի ժամկետանց փոխատվությունը և գրավ դրված մնացած պարտատոմսերը փոխանակում է նոր փոխառության պարտատոմսերով։ Փոխատվության գրավ դրված պարտատոմսերը, վորոնց ժամկետը չի անցել, խնայդրամարկղն ամբողջությամբ փոխանակում է նոր փոխառության պարտատոմսերով։

ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական
Կոմիսար՝ Գ. ԳՐԻՆԿՈ

ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի վարչության
պետ՝ Ա. ՈՉԵՐԵԱՆՍԿԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0933147
11
28169